ԵՐԱԺՇՏԱՌՒԹՄԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ
ՊԱՐԵՐ, ԽԱՂԵՐ

# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Երաժշտ.՝ *Ա. Հարությունյանի*






## «ԷԿՈՍԵԶ»

Երաժշտ.՝ *Ֆ. Շուբերտի*

Չափավոր, ոչ շատ արագ




*Հարկավոր է կատարել երաժշտության բնույթին համապատասխան շարժումներ՝ ցատկեր, ձեռքերի սլացիկ շարժումներ:*

# ՊԱՐ ԴԱՓԵՐՈՎ

Երաժշտ.՝ *ժողովրդական*

Պարի նկարագրումը՝ *Է. Աստվածատրյանի*




*Երեխաները, նախօրոք բաժանվելով զույգերի, երկու շարքով կանգնում են շրջանաձև, դեմքով դեպի հանդիսատեսը՝ աղջիկները առջևից, տղաները՝ դափերը ձեռքերին՝ իրենց զույգերի հետևից: Կիսաշրջանի կենտրոնում կանգնած աղջիկը մենակատարն է:*

*Զայնամուտին տղաները դափ են խփում, իսկ աղջիկները՝ ծափ տալիս (յուրաքանչյուր տակտին՝ մեկ ծափ կամ հարված):*

*Առաջին մաս*

1–8–րդ տակտերին մենակատար աղջիկը գնում է պարային քայլով շրջանագծին զուգահեռ և կատարում մի լրիվ շրջան (մինչև իր տեղը)՝ ձեռքերը պարզելով մեկ դեպի աջ, մեկ դեպի ձախ, դաստակները պտտեցնելով դեպի ներս (1,3,5,7–րդ տակտերին՝ դեպի աջ, իսկ 2,4,6,8–րդ տակտերին՝ դեպի ձախ):

*Երկրորդ մաս*

1–ին տակտին՝ կատարում է երկու քայլ դեպի աջ կողմը (սկսած աջ ոտքից):
2–րդ տակտին՝ մոտեցնում է աջ ոտքը ձախին և երկու անգամ դաստակները ներս պտտեցնում:
3–րդ տակտին՝ նույն ձևով վերադառնում է իր տեղը՝ ձեռքերը դեպի աջ պարզելով:
4–րդ տակտին՝ տեղում կանգնած դաստակները երկու անգամ դեպի ներս է պտտեցնում:
5–8–րդ տակտերին՝ ձեռքերը վեր բարձրացնելով՝ պտտվում է իր շուրջը՝ վերջում ընդունելով ելման դիրքը:
Երկրորդ մասի կրկնության ժամանակ մենակատարը կատարում է նույն շարժումները՝ հակառակ ուղղությամբ (ձեռքերը դեպի ձախ պարզելով):

*Առաջին մաս*

1–8–րդ տակտերին՝ բոլոր աղջիկները, ձեռքերը ձախ և կողմ տարածելով, գնում են աջ շրջանագծի ուղղությամբ, ափերը շուռ տալով մեկ դեպի վերև, մեկ դեպի ներքև: Այդ ընթացքում տղաները դափին ռիթմիկորեն խփելով՝ գնում են շրջանագծի ուղղությամբ և հանդիպում աղջիկներին ելման դիրքի հակառակ կողմում (կազմում են կիսաշրջան և կանգնում դեպի հանդիսատեսը):

*Երկրորդ մաս*

1–8–րդ տակտերին՝ բոլորը նույն ձևով վերադառնում են իրենց տեղերը: Աղջիկներն այս անգամ ձեռքերը դեպի ձախ են պարզում:
Երաժշտության երկրորդ մասը կրկնվում է:
1–3–րդ տակտերին աղջիկները ձեռքերը վեր բարձրացնելով, պտտվում են իրենց շուրջը:
4–րդ տակտին ձեռքերը ցած և կողմ պարզելով՝ խոնարհվում են տղաների առաջ:
5–8–րդ տակտերին շարունակում են պտտվել և կանգնում դեմքով դեպի հանդիսատեսը:

*Առաջին մաս*

1–8–րդ տակտերին զույգ կազմողները կանգնում են իրար հետևից և, շարժվում դեպի աջ՝ շրջանագծի ուղղությամբ: Տղաները շարունակում են դափ խփել, իսկ աղջիկները ձեռքերը պարզում են մեկ դեպի աջ, մեկ դեպի ձախ և դաստակները դեպի ներս պտտեցնում:

*Երկրորդ մաս*

1–4–րդ տակտերին աղջիկները, ձեռքերը աստիճանաբար բարձրացնելով, գնում են շրջանի ներսը (կազմվում է ավելի փոքր շրջան):
5–8–րդ տակտերին աղջիկները, ձեռքերը աստիճանաբար իջեցնելով և հետ–հետ գնալով, վերադառնում են իրենց տեղերը:
Երկրորդ մասի կրկնողության ժամանակ տղաները իջնում են աջ ծնկի վրա, իսկ աղջիկները պարում են նրանց շուրջը: 6–րդ տակտի վերջում աղջիկները կանգնում են իրենց զույգերի դիմաց և, ձեռքերը ցած՝ կողմ տարածելով, թեթև խոնարհվում են առաջ:
Բոլոր երեխաները շարժվում են պարային քայլով: Տղաները պարի ողջ ընթացքում ռիթմիկ խփում են դափին:

# ՔՈՉԱՐԻ

(հայկական ժողովրդական պար)

Դաշնամուրի համար՝ *Ե. Խոսրովյանի*




*Երխաները, միմյանց ձեռքերից բռնած, կանգնում են կիսաշրջանաձև:*

*Առաջին ձև*

1–ին **տակտին** կատարում են քայլ դեպի աջ՝ աջ ոտքով և ձախը միացնում են աջին:

2–րդ **տակտին** աջ ոտքը տանում են աջ, ձախը կտրուկ առաջ՝ ձգելով թաթը:

3–6–րդ **տակտերին** կրկնում են 1–2–րդ տակտերի շարժումները դեպի ձախ, հետո՝ դեպի աջ:

*Երկրորդ ձև* (շարժվել առաջ)

7–18–րդ տակտերին հարկավոր է կրկնել 1–6 տակտերի շարժումները: Սակայն երեխաները շարժվում են առաջ՝ աստիճանաբար բարձրացնելով միացած ձեռքերը:

*Երրորդ ձև* կրկնվում են 1–6 տակտերի շարժումները:

*Չորրորդ ձև* (շարժվում են հետ)

7–18–րդ **տակտերին** կրկնվում են 7–18 տակտերի շարժումները դեպի հետ՝ աստիճանաբար իջեցնելով ձեռքերը:

# ՆԱԶ ՊԱՐ

Կանացի պար, մենապար

Երաժշտ.՝ *ժողովրդական*

**Moderato grazioso**






*Պարը կատարում է մեկ աղջիկ՝ որպես մենապար:*

*Շարժումները կարող են լինել նախապես ուսուցանված, ինչպես նաև ստեղծագործական բնույթի:*

# ԻՏԱԼԱԿԱՆ ՊՈԼԿԱ

Երաժշտ.՝ *Ս. Ռախմանինովի*



Չեխական ժողովրդական պար է՝ տարածված շատ երկրներում: Ունի բազմաթիվ տարբերակներ: Անվանումը ծագել է «պոլկա» բառից, որ նշանակում է մանր քայլ՝ փոքր թռիչքով:

Առաջարկվում է պարել Ս. Ռախմանինովի **«Իտալական պոլկայի»** երաժշտության ուղեկցությամբ: Պարաքայլային չորս հաշիվը համապատասխանում է պոլկայի 2/4 չափի չորս ութերորդականներին:

Շարժումը պետք է սկսել երաժշտության նախատակտից. դա աջ ոտքով թեթև թռիչքն է, իսկ ձախ ոտքը ծալված ծնկով  բարձրացված է վեր:

1 հաշվին – թռիչք ձախ ոտքով, աջ ոտքը՝ բարձրացված:
2 – աջ ոտքով քայլ առաջ:
3 – ձախ ոտքը քայլով միացնել աջ ոտքին:
4 – աջ ոտքով քայլ առաջ:

Նույնը մյուս ոտքով:

1 – թռիչք աջ ոտքով, ձախը՝ բարձրացված:
2 – ձախ ոտքով քայլ առաջ:
3 – աջ ոտքը քայլով միացնել ձախ ոտքին:
4 – ձախ ոտքով քայլ առաջ:

Հիմնական քայլը աղջիկների և տղաների համար նույնն է: Կարելի է կատարել տեղում՝ առաջ և հետ, աջ ու ձախ շարժվելով, նաև պտույտներ գործելով:

Աղջիկներն ու տղաները սովորաբար պարում են իրար ձեռքերից խաչաձև բռնած կամ դեմ դիմաց, ձեռքերը՝ գոտկատեղին:

Պարի բեմադրությունը ուսուցչինն է:

## ՊՈԼԿԱ

Երաժշտ.՝ *Մ. Գլինկայի*



# ՔՈՒՉԻԿՆ ՈՒ ՓՈՒՉԻԿԸ

Խոսք՝ *Ն. Միքայելյանի*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*




Բայց չը - հա - սավ իմ փու - չի - կին Իմ շը - նի - կի քա - թի - կը,
Իմ փու - չի - կին իմ շը - նի - կի Փափ - լիկ, թըմփ - լիկ քա - թի - կը:
D.C.
f
Աչ - քը լուս - նին հա - ռած՝ Վեր էր ցատ - կում Քու - չի - կը,
mf
Աչ - քը լուս - նին հա - ռած՝ Վեր էր ցատ - կում Քու - չի - կը,
rit.




*Բեմականացնել երգը՝ ելնելով երգի բովանդակությունից:*

1. Երկինք թռավ փուչիկը,
Իմ սիրուն փուչիկը,
Թաթը պարզեց Քուչիկը,
Որ բռնի փուչիկը:

Բայց չհասավ իմ փուչիկին
Իմ շնիկի թաթիկը,
Իմ փուչիկին իմ շնիկի
Փափիլիկ, թմփլիկ թաթիկը:

2. — Վա՜յ, շուտ հասեք, բռնեցեք.—
Ձայն տվեց Աշիկը,
Բայց գնալով հեռացավ
Ու կորավ փուչիկը:

— Մի՛ լար, Աշիկ, լռի՛ր, Քուչիկ,
Էլ չեք հասնի փուչիկին.-
Ասաց Տատը տխուր կանգնած
Աշիկին ու Քուչիկին:

3. Իջավ խաղաղ երեկոն
Ու փռեց փեշերը,
Երևացին երկնքում
Լուսնի վառ թշերը:

Իսկ Քուչիկը ողջ գիշերը
Չփակեց իր աչերը,
Երկինք նայեց, աղմուկ հանեց.
Վերջ չտվեց հաչելը:

Աչքը Լուսնին հառած՝
Վեր էր ցատկում Քուչիկը.
Ու կարծում էր նա,
Թե գտել է փուչիկը:

## ВО ПОЛЕ БЕРЁЗА СТОЯЛА

*(русская народная песня)*

**Moderato**




Во поле берёза стояла,
Во поле кудрявая стояла,
Люли, люли, стояла,
Люли, люли, стояла.

Я пойду, пойду погуляю,
Белую берёзу заломаю,
Люли, люли, заломаю,
Люли, люли, заломаю.

Срежу я с берёзы три пруточка
Сделаю себе я три гудочка,
Люли, люли, три гудочка,
Люли, люли, три гудочка.

## ՇՈՒՐՋՊԱՐ

*"Во поле берёза стояла"*

(ռուսական ժողովրդական պար, մշակումը՝ Ա.Նովիկովի)

Պարի նկարագիրը. *Ելման դիրք՝ երեխաները կանգնում են իրար ձեռքից բռնած, շրջանաձև, դեմքով դեպի շրջանի կենտրոնը:*

**1–3 տակտեր**՝ գնում են դեպի շրջանի կենտրոն՝ քայլը սկսելով աջ ոտքից:

**3–րդ տակտ**՝ տեղում 3 անգամ դոփում են՝ ցույց տալով երաժշտության ռիթմական պատկերը: Այնուհետև յուրաքանչյուր քառորդին կատարում են մեկ քայլ:

**4–5–րդ տակտեր**. առանց շրջվելու, շարժումն սկսելով ձախ ոտքից՝ վերադառնում են ելման դիրք:

**6–րդ տակտ**՝ նորից դոփում են երեք անգամ:

**7–8–րդ տակտեր**՝ տղաները ազատ ձեռքերով, աղջիկները ձեռքերը կրծքի մոտ պահած, դեմքով դեպի շրջանի կենտրոնը, շարժվում են կից քայլքով դեպի աջ:

**9–րդ տակտ**՝ կատարում են երեք դոփյուն:

**10–12 տակտեր**՝ նույն ձևով երեխաները շարժվում են դեպի ձախ:

**12–րդ տակտ**՝ նորից դոփում են երեք անգամ: Այնուհետև շուրջպարը նորից կրկնվում է:

# «Ձ» ՏԱՌԻ ԵՐԳԸ

«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆ» երգաշարից

*Ձ-ն պստլիկ իր ձագերին*
*Ձայն է տալիս, խրատում,*
*Որ ձիերի սմբակներից*
*Զգույշ լինեն փողոցում:*

Խոսք՝ *Ն. Միքայելյանի*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*




*Կատարել մինչև* 2 *(առաջին քառյակը երկու անգամ), կրկնել սկզբից նախանվագը և կատարել երկրորդ և երրորդ քառյակները, շարունակել մինչև D C, այնուհետև նորից սկզբից մինչև* 2 *և անցնել* Coda:




Իմ տատն ուներ մի հավիկ,
Սիրուն՝ ինչպես կաքավիկ,
Ձու էր ածում տան համար,
Հետո դարձավ թխսամայր:

Ոտքը տաք էր, կուրծքը՝ տաք,
Ձվերն առավ թևի տակ,
Ժամը թռավ, օրն անցավ,
Թակթկոցը շատացավ:

Ծակծկեցին ձվերը,
Եվ դուրս եկան Ձ-երը,
Թուխսը թռավ տեղից վեր,
Ասաց.— Բարև, ձագուկներ,
Եվ հավաքեց թևի տակ
Միանգամից քսան ձագ:

Իմ տատն ուներ մի հավիկ,
Սիրուն՝ ինչպես կաքավիկ,
Ձու էր ածում տան համար,
Հետո դարձավ թխսամայր:

*Բեմականացնել «Ձ» տառի երգը բովանդակությանը համապատասխան:*

# «Շ» ՏԱՌԻ ԵՐԳԸ

«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆ» երգաշարից

*Շ-ն՝ շաղերում բացված շուշան,*
*Շուրթին շշուկ շողերի,*
*Շնկշնկոցն էր լսում զարնան*
*Անուշաբույր հովերի:*

Խոսք՝ *Ն. Միքայելյանի*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*






Օրո՛ր, շորո՛ր, շուշաններ,
Շող ու շաղոտ շուշաններ,
Շուրջը՝ ծաղկած բուփ ու ծառ,
Շող, շաղ, երգ ու տաղ:

Շնկա, շնկա անուշ հով՝
Շուշան ծաղկի շշուկով,
Դու մեզ գարնան հուրը բեր,
Ծով-ծով բույրը բեր:

*«Շ» տառի երգի բովանդակությանը համապատասխան հորինել պարային շարժումներ:*

# ԵՐԳ ՉՅՈՒՆԱՆՈՒՇԻԿԻ ԵՎ ՉՄԵՌ ՊԱՊԻԿԻ ՄԱՍԻՆ

Խոսք՝ *Ն. Միքայելյանի*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*




a tempo
Չյուն - ա - նու - շիկ, դո՛ւ էլ ա - րի, Գա - լըդ լի - նի թող բա - րի,
p
Լույ - սի մի փունջ ծը - պիտ դար - ձած Մեզ հետ մը - տիր շուրջ - պա - րի,
mf
mp
Լույ - սի մի փունջ ծը - պիտ դար - ձած Մեզ հետ մը - տիր շուրջ - պա - րի:
f


—Մո-տի՛կ վա-զեք,— պա - պիկն ա-սաց,— Կը - տամ մըր-գեր ու գըր - քեր,
f
Նը - րանց, ով - քեր լավ են պա - րում, Ով - քեր գի - տեն լավ եր - գել:
rit.
a tempo
Չյուն - ա - նու - շիկ դո՛ւ էլ ե - կար, Գա - լըդ ե - ղավ շատ բա - րի,
p
a tempo
cresc.




Կարծես ծագեց մի նոր արև
Ու բաց եղավ մի մեծ դուռ,
Ձմեռ պապին ասաց՝ բարև՛.
Եկել եմ ես ձեզ մոտ հյուր:

Ձյունանուշի՛կ, դո՛ւ էլ արի,
Գալը լինի թող բարի,
Լույսի մի փունջ ժպիտ դարձած
Մեզ հետ մտի՛ր շուրջպարի:

— Մոտի՛կ վազեք,— պապիկն ասաց,—
Կտամ մրգեր ու գրքեր,
Նրանց, ովքեր լավ են պարում,
Ովքեր գիտեն լավ երգել:

Ձյունանուշի՛կ, դո՛ւ էլ եկար,
Գալդ եղավ շատ բարի,
Լույսի մի փունջ ժպիտ դարձած՝
Մեզ հետ մտար շուրջպարի:

*Երգը բեմականացնել՝ ելնելով բովանդակությունից:*
*Վերջում շուրջպար բռնել տոնածառի շուրջը Ձմեռ պապի և Ձյունանուշիկի հետ միասին:*

# ՇՈՂՇՈՂՈՒՆ ՏՈՆԱԾԱՌ

Խոսք՝ *Էվ. Շահինյանի* | Երաժշտ.՝ *Էվ. Շահինյանի*




Եկե՛ք, եկե՛ք հավաքվենք,
Շրջան կազմենք ու երգենք.
Ջա՜ն, շողշողո՛ւն տոնածառ,
Քո զարդերը՝ վառ, պայծառ:

Ուրախ ծափ տանք ու պարենք,
Տոնածառը մեր զովե՛նք:
Ջա՜ն, շողշողո՛ւն տոնածառ,
Քո զարդերը՝ վառ, պայծառ:

*Պարի շարժումները կատարվում են երգի բովանդակությանը համապատասխան:*

# ՊԱՐԱՀԱՆԴԵՍԱՅԻՆ ՊԱՐ

Երաժշտ.՝ *Կ. Եղիզարյանի*
Շարժում՝ *Կ. Ղազարյանի*

Հանդիսավոր



*Երեխաները կանգնած են տղա–աղջիկ դեմ դիմաց, ձեռքերը՝ ձգված և միացրած, ուղղությունը՝ դեպի կենտրոն:*

1–ին ձև

1–2–րդ տակտերին զույգերը չորս կից քայլերով գնում են դեպի շրջանի կենտրոն:
3–4–րդ տակտերին հետ են գնում իրենց նախկին տեղերը:
5–րդ տակտում՝ մեկ քայլ դեպի աջ, ձեռքերը դեմքի առջևից իջեցնելով և բարձրացնելով կատարում են 2 ծափ կրծքի առջև, 6–րդ տակտում վերադառնում են հետ և կատարում 2 ծափ:
7–8–րդ տակտերում ձեռքերը, նավակի նման միացրած, հարկավոր է փոխել տեղերը:
5–8–րդ տակտերը կրկնվում են 2 անգամ:

2–րդ ձև

1–4–րդ տակտերին կրկնվում են 1–ին ձևի շարժումները, 5-8-ին կատարվում են 1–ին ձևի շարժումները՝ մեկ քայլ առաջ, մեկ քայլ հետ:

3–րդ ձև

1–4–րդ տակտերը կրկնվում են:
5–8–րդ տակտերին՝ մեկ քայլ աջ՝ ծափ, մեկ քայլ ձախ՝ ծափ, և փոխել տեղերը՝ ձեռքերը «նավակի» դիրքով պահելով:

# ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ՊԱՐ

Երաժշտ.՝ *Արեգ Լուսինյանի*




*Կատարել երաժշտության բնույթին համապատասխան շարժումներ:*

ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ
ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

# ՑԱՏԿԱՊԱՐԱՆ

Երաժշտ.՝ *Ա. Խաչատրյանի*



# ՈՒՐԱԽ ԳՆԱՑՔ

«ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ» շարքից

*Սարով, ձորով ու անտառով*
*Մի գնացք է արագ վազում,*

*Եվ զնգում է երգը նրա*
*Մանուկների վառ երազներով:*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*

**Moderato**




f
sim.
cresc.
sf
8va
ff
p




# ԿԱՊԻԿՆԵՐԸ ԶՎԱՐՃԱՆՈՒՄ ԵՆ

«ԿՐԿԵՍ» շարքից

*Կապիկները՝ միշտ ճարպիկ,*
*Ասես լինեն հմուտ մարզիկ,*
*Ցատկոտում են, ճչում, պարում,*
*Ինչպես իրենց Աֆրիկայում:*

**Allegro**

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*




de cresc.
cresc.

# ՀԱՄԱՐՁԱԿ ՀԵԾՅԱԼՆԵՐԸ

«ԿՐԿԵՍ» շարքից

*Սլանում են առաջ, առաջ,*
*Հեծյալները ուրախ ու քաջ,*

*Ու դառնում են վազող կրակ,*
*Գեղեցկություն, կորով ու կամք:*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*

**Allegro scherzando**





cresc.
f
Ped.
pp
cresc.
sf p
ff

# ԳԱՐՆԱՆ ՍՊԱՍՈՒՄ

«ԳԱՐՆԱՆ ԵՐԵՔ ԵՐԳ» շարքից

Խոսք՝ *Ն. Միքայելյանի*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*

**Allegro moderato**




Հա - զա - րա - շող գա - րու - նը նոր ե - րա -
զանք վա - ռեց, Ծաղ - կի շուր - թին զո -
հար շա - ղով ծը - պիտ - ներ շա - րեց:
Գա - րու՛ն, գա - րու՛ն, գար - նա՛ն ա - րև,


Ա.
Աստ - ղա - յին կա - մար,
Վա ռեք - հա -
զար ա - նուրջ ու երգ
Ձեր հը - րով ան -
մար:
Գա - րու՛ն, գա - րու՛ն, գար - նա՛ն ա -
րև,
Աստ - ղա - յին կա - մար,




Հազարաշող գարունը նոր երազանք վառեց,
Ծաղկի շուրթին գոհար շաղով ժպիտներ շարեց:

*Կրկներգ* - Գարու՛ն, գարու՛ն, գարնա՛ն արև,
Աստղային կամար,
Վառեք հազար անուրջ ու երգ
Ձեր հրով անմար:

Կանցնեն ամառ, աշուն, ձմեռ երամի նման,
Բայց կսպասենք նորից բացվող նոր երգին գարնան:

*Կրկներգ* - Գարու՛ն, գարու՛ն, գարնա՛ն արև,...

# ԾԻՏԻԿԻ ՕՐՕՐԸ

Խոսք՝ *Հովհ. Թումանյանի*

Երաժշտ.՝ *Ա. Մանուկյանի*




Կախված է ճյուղից ճոճը ծիտիկի,
Փչի՛, հովի՛կ, փչի՛.

Ճոճն օրորվի՝ տանի–բերի,
Նանի՛, ծիտի՛կ, նանի՛:

# ԱՐՋՈՒԿԸ

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*



ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

# ԲԱՐՁՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ

Խոսք՝ *Ն. Միքայելյանի*

Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*




Պաղ-պաղ ջը - րեր հայ-րե-նի, Սեզ-սեզ սա-րեր նա ու - նի,
cresc.
Պաղ-պաղ ջը - րեր հայ-րե - նի: Լույս ծը-պիտն իր աչ-քե - րում
mf
Նա զա-րում է մեզ բե - րում, Շող է տա-լիս մեր կյան - քին,
p
Ա...
p


f
Այգ է վա - ռում մեր ճամ - փին: Ա...
f
Շող է տա - լիս մեր կյան - քին,
Ա...
mp
Coda
Այգ է վա - ռում մեր ճամ - փին: Շող է տա - լիս մեր կյան - քին,
poco a poco dim.
Dal S.







Կա մի բարձրիկ Հայաստան,
Մի գեղեցիկ Հայաստան,
Սեգ–սեգ սարեր նա ունի,
Պաղ-պաղ ջրեր հայրենի:

Կրկներգ – Լույս ժպիտն իր աչքերում՝
Նա գարուն է մեզ բերում,
Շող է տալիս մեր կյանքին,
Այգ է վառում մեր ճամփին:

Կա մի քաղցրիկ Հայաստան,
Կա մի ծաղկած բուրաստան,
Դար ու դար է նա անցել
Ու նոր կյանքով նորացել:

Կրկներգ – Լույս ժպիտն իր աչքերում...

Աստղ ու լուսնի ցոլանքով
Ծով երկինքն է կամարվում,
Մենք էլ պես–պես ծաղկունքով
Մեր երկիրն ենք զարդարում:

Կրկներգ – Լույս ժպիտն իր աչքերում...

# ՄԱՅՐԻԿԻ ՕԳՆԱԿԱՆԸ

Խոսք՝ *Վիկտոր Վարդանյանի* Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*

**Allegretto non troppo**






Ճերմակ գոգնոցը հագիս
Ես օգնում եմ մայրիկիս,
Իմ մայրիկը, ա՜յ, տաք-տաք
Պատրաստում է կարկանդակ:

Հո՛ ես պարապ չե՞մ նստում՝
Հա՛ վերցնում եմ և ուտում,
Հա՛ վերցնում եմ և ուտում...
Հա՛ վերցնում եմ և ուտում... և ուտում... և ուտում... համ...

# ՄԱՆՈՒՇԱԿ

«ԱՐԵՎԱԶՕԾ ԾԱՂԿԱՆՈՑ» շարքից

Խոսք՝ *Ս. Մուրադյանի* Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*




Պարզ եր - կըն - քից եմ Իմ գույ - նը ա - ռել,
Գար - նան կա - պու - տակ Ա - չիկ եմ դա - ռել:
Պարզ եր - կըն - քից եմ Իմ գույ - նը ա - ռել,
f
(riten.)




Հեզ Մանուշակ եմ՝
Ժպտուն, կապուտաչ,
Ինձ դուր է գալիս
Ապրիլը կանաչ:
Պարզ երկնքից եմ
Իմ գույնը առել,
Գարնան կապուտակ
Աչիկ եմ դառել:

Հեզ Մանուշակ եմ՝
Ժպտուն, կապուտաչ,
Ինձ դուր է գալիս
Ապրիլը կանաչ:
Ջինջ աչքերիս մեջ
Արևն է շողում,
Ինձ լավ եմ զգում
Հայոց իմ հողում:

# ՎԱՐԴԸ

«ԱՐԵՎԱԶՕԾ ԾԱՂԿԱՆՈՑ» շարքից

Խոսք՝ *Ս. Մուրադյանի* Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*

**Andante dolce**




p (pp)
Grazioso
Ես էլ վառ - վը - ռում Վարդն եմ մա - յիս - յան Քըն -
mp
քուշ, բու - րա - վետ Ծա - ղիկն եմ զար - նան:
Fine
Ես էլ վառ - վը - ռում Զարդն եմ մա - յիս - յան, Ա -




Ես էլ վառվռուն
Վարդն եմ մայիսյան
Քնքուշ, բուրավետ
Ծաղիկն եմ գարնան:

Ով կոպիտ ձեռքով
Թերթերս պոկի,
Իմ փուշը նրա
Ձեռքը կծակի:

Ես էլ վառվռուն
Զարդն եմ մայիսյան,
Արևն է ինձ հետ
Խաղում հուրհրան:

Ես էլ վառվռուն
Վարդն եմ մայիսյան
Քնքուշ, բուրավետ
Ծաղիկն եմ գարնան:

# ԹԻԹԵՌՆԻԿ

Խոսք՝ *Լ. Պողոսյանի* Երաժշտ.՝ *Ս. Սարուխանյանի*









Ինչո՞ւ ես միշտ, իմ քիքեռնի՛կ,
Մենակ թռչում ծաղկից ծաղիկ,
Եկ թռչկոտենք մենք իրար հետ
Ծաղկունքի մեջ այս բուրավետ:

Սիրո՛ւն քիքեռ, մի՛ վախենա,
Արի՛ մոտիկ, քեզ ձեռք չեմ տա,
Չէ՞ որ ես էլ, ի՛մ քիքեռնի՛կ,
Շատ եմ սիրում ծիլ ու ծաղիկ:

# ՇՈՒՏ ԱՐԻ, ԳԱՐՈՒՆ

Խոսք՝ *Հ. Գալիկյանի*

Երաժշտ.՝ *Ս. Գալիկյանի*









Շո՛ւտ արի, գարո՛ւն,
Աննման, նախշուն,
Վե՛րջ տուր դու ձյունին,
Բուք ու բորանին:

Քեզ ենք սպասում,
Կարոտով կանչում,
Բեր մեզ լավ օրեր,
Հուրհրան արև:

Դե արի՛ շուտով,
Քո պայծառ ժպիտով,
Պայծառ արևով,
Ալվան ծաղկունքով:

# ՄԱՅՐԻԿԻՍ ՏՈՆԸ

Խոսք՝ *Ա. Մարաշյանի* | Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*

**Allegretto cantabile**






Մայրիկ, այսօր տոնն է քո,
տո՛նը, տո՛նը քո,
Մայրիկ, այսօր տոնն է քո,
տո՛նը, տո՛նը քո,
Գիտեմ՝ շատ ես դու հոգնել,
պետք է քեզ օգնել:

Որ դու նստես՝ ես մաքրեմ,
Տուն ու տեղը զարդարեմ
Եվ այսօրվա գործը իմ
Ես նվիրեմ քո տոնին:

Մայրիկ, այսօր տոնն է քո,
տո՛նը, տո՛նը քո,
Թող քո տոնը կարկաչի
երգ ու ծիծաղով,
Որ խնդությամբ քո պայծառ
ծաղկեմ քեզ համար:

# ՍԻՐՈՒՄ ԵՄ

Խոսք՝ ***Է. Միլիտոնյանի*** Երաժշտ.՝ ***Հ. Խրիմյանի***




Մայրիկին սիրում եմ,
Հայրիկին սիրում եմ,
Սիրում եմ նրանց
Ա՜յ այն ամպի չափ:

Երբ որ անձրև գա,
Ամպը չքանա,
Կսիրեմ նրանց
Ծիածանի չափ:

Մայրիկին սիրում եմ,
Հայրիկին սիրում եմ,
Սիրում եմ նրանց
Ա՛յ, այն ամպի չափ:

Երբ ծիածանն էլ
Հոգնի ու գնա,
Կսիրեմ նրանց
Այն երկնքի չափ:

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՄԵՐ ՍԻՐԵԼԻ

Խոսք՝ *Հ. Խրիմյանի* Երաժշտ.՝ *Հ. Խրիմյանի*




Ուսուցիչնե՛ր մեր սիրելի,
Ձեր տոնն է այսօր կրկին,
Մեր ջերմ երգ ու պարով ենք ձեզ
Մենք շնորհավորում:
Եկել է պահը ձեզ ողջունելու,
Մեր սրտի խոսքը ձեզ հղելու,
Մեր բարի խոսքը ձեզ հղելու:

*Կրկներգ –*
Շնորհավո՛ր ձեր տոնը,
Շնորհավո՛ր ձեր տոնը,
Սիրելի՛ ուսուցիչներ:

Ամեն ժամ, ամեն վայրկյան դուք
Ձեր ջերմ սերն եք մեզ տվել,
Գուրգուրել եք ու փայփայել
Անվերջ երազել:
Եկել է պահը ձեզ ողջունելու,
Մեր սրտի խոսքը ձեզ հղելու,
Մեր բարի խոսքը ձեզ հղելու:

*Կրկներգ –*
Շնորհավո՛ր ձեր տոնը,
Շնորհավո՛ր ձեր տոնը,
Սիրելի՛ ուսուցիչներ:

# ԶԱՆԳՆ ԱՌԱՋԻՆ

Խոսք՝ *Ն. Միքայելյանի* Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*






Հենց որ հնչեց մեր սեպտեմբերյան
Զանգն առաջին ուրախաձայն,
Մենք, ծաղիկներ առած,
Քո անուշ կանչով տարված,
Գիրկդ եկանք, դպրո՛ց,
Մենք, ծաղիկներ առած,
Քո անուշ կանչով տարված,
Գիրկդ եկանք, դպրո՛ց:

Մի ջերմ ողջույն մեր զանգի կանչին,
Ուսուցչուհուն մեր առաջին,
Նա մոր նման ժպտաց
Եվ ուրախ ձայնով ասաց.
— Բարո՛վ եկաք դպրոց:
Նա մոր նման ժպտաց
Եվ ուրախ ձայնով ասաց.
— Բարո՛վ եկաք դպրոց:

# ԱՐԱԳԻԼ

Խոսք՝ *Ն. Միքայելյանի* Երաժշտ.՝ *Ա. Լուսինյանի*




Արագի՞լ, արագի՞լ,
Մեր ծառին քառեցիր,
Կարմիր մատիտ կտուցդ
Որտեղի՞ց ճարեցիր:

Արագի՞լ, արագի՞լ,
Կտուցով քո սիրուն
Կակաչներ ես մեզ համար
Նկարում, նկարում:

Արագի՞լ, արագի՞լ,
Մինչ աշուն մնացիր,
Ծառին կարմիր տերևներ
Նախշեցիր, գնացիր:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

# ԳԱՐՈՒՆ

Խոսք՝ *Ս. Կապուտիկյանի* | Երաժշտ.՝ *հայկական ժողովրդական*




ծաղ - կով, գա - րուն - քով: Ծաղ - կեց սա - րը,
Ped.
mf
ծաղ - կեց քա - րը, Լըց - վեց կյան - քով, բուր - մուն -
քով: Լըց - վեց կյան - քով, բուր - մուն - քով:
rit.




Ելավ շողը, գրկեց հողը,
Բացվեց ծաղկով, գարունքով:

Ծաղկեց սարը, ծաղկեց քարը,
Լցվեց կյանքով, բուրմունքով:

Ելավ շողը, գրկեց հողը,
Բացվեց ծաղկով, գարունքով:

# ՋԱՆ ԾԱՂԻԿ

*Հայկական ժողովրդական երգ*






Արևը կամար, կամար,
Ջա՜ն, ծաղի՛կ ջան, ջա՜ն,
Կապել է ոսկե քամար,
Ջա՜ն, ծաղի՛կ ջան, ջա՜ն:

Իմ ախպեր սարումն ա,
Ջա՜ն, ծաղի՛կ ջան, ջա՜ն,
Շվին գոտկածալումն ա,
Ջա՜ն, ծաղի՛կ ջան, ջա՜ն:

Ախպե՛ր ջան, շվի՛ղ ածա,
Ջա՜ն, ծաղի՛կ ջան, ջա՜ն,
Քույրդ Լոռվա քարումն ա,
Ջա՜ն, ծաղի՛կ ջան, ջա՜ն:

# ՎԱՐԴԻ ԾԱՌ

*Հայկական ժողովրդական երգ*






Այգու միջին՝ վարդի ծառ,
Վարդի ծառ, վարդի ծառ,
Կաքավները՝ վրեն քառ,
Վրեն քառ, վրեն քառ:

Հե՜յ, ջա՛ն, վարդի ծառ,
Ջա՛ն, ջա՛ն, վրեն քառ:

Ծառի վրա՝ մի խնձոր,
Մի խնձոր, մի խնձոր,
Գնանք սարը, բռնենք լոր,
Բռնենք լոր, բռնենք լոր:

Հե՜յ, ջա՛ն, մի խնձոր,
Ջա՛ն, ջա՛ն, բռնենք լոր:

Պաղ աղբյուրի սառը ջուր,
Սառը ջուր, սառը ջուր,
Լցրո՛ւ կուժը, բե՛ր ինձ տուր,
Բե՛ր ինձ տուն, բե՛ր ինձ տուր:

Հե՜յ, ջա՛ն, սառը ջուր,
Ջա՛ն, ջա՛ն, բեր ինձ տուր:

## ՎԱՐԴԱՎԱՌ

*Հայկական ժողովրդական երգ*




Շուշան, նարգիզ, մեխակ ու վարդ
Օրորվում են մեր սարում,
Աղջիկ–տղա խմբով ուրախ
Ե՛վ երգում են, և՛ պարում:

Վարդավառի վարդերն են վառ
Ու ծաղկունքը բուրավետ,
Ով որ շոգին գնում է սար,
Նա շնչում է գարնան հետ:

# ՋԱ՛Ն, ԳԱՌՆՈՒԿ

*Հայկական ժողովրդական երգ*






Կապեմ վզիդ զնգ-զանգակ,
Դե՛, զնգլ, զնգլ, զնգլ, ջա՜ն զառնուկ,
Օրը տաք է՝ արեգակ,
Դե՛, զնգլ, զնգլ, զնգլ, ջա՜ն զառնուկ:

Արտի բոլոր՝ կանաչ խոտ,
Իմ սիրո՛ւն զառնուկ,
Արի տանեմ քեզ արոտ,
Իմ սիրո՛ւն զառնուկ:

Տանեմ արոտ, կշտանաս,
Դե, զնգլ, զնգլ, զնգլ, ջա՜ն զառնուկ,
Խոտ ուտես, շուտ մեծանաս,
Դե, զնգլ, զնգլ, զնգլ, ջա՛ն զառնուկ:

Կանաչ դաշտի մեջ խաղաս,
Իմ սիրո՛ւն զառնուկ,
Երեկոյան տուն դառնաս,
Իմ սիրո՛ւն զառնուկ:

# ԼԵՊՀՈ՜, ԼԵ՛, ԼԵ՛

*Հայկական ժողովրդական երգ*






Լեպհո՜, լե՛, լե՛, լեպհո՜, լե՛, լե՛,
Լեպհո՜, լե՛, լե՛, լեպհո՜, լե՛, ,
Լեպհո՜, լե՛, լե՛, լեպհո՜, լե՛, լե՛,
Լեպհո՜, լե՛, լե՛, լեպհո՜, լե՛:

Հոդալը՛ ջան, հոդալը՛ ջան, հոդալը՛,
Աչքեր սիրուն՝ դարալը՛ ջան, դարալը՛:

Ելնենք սարը, բռնենք պարը,
Մամռոտ քարը թող թնդա,
Բացվի օրը, մտնենք ձորը,
Անուշ հովը երբ շնկա:

Հոդալը՛ ջան, հոդալը՛ ջան, հոդալը՛,
Աչքեր սիրուն՝ դարալը՛ ջան, դարալը՛,

Թողնենք սարը, ուրախ պարը,
Մամռոտ քարը սարի հետ,
Բռնենք մեր տան ճանապարհը,
Ծաղիկ փնջած դառնանք տուն:

Հոդալը՛ ջան, հոդալը՛ ջան, հոդալը՛,
Աչքեր սիրուն՝ դարալը՛ ջան, դարալը՛:

# ԼՈՐԻԿ

*Հայկական ժողովրդական երգ*






Dal 𝄋

Առավոտյան փչեց հով,
Արտը ծփաց, դարձավ ծով,
Արտի միջից թռավ լոր,
Թռավ, ընկավ սար ու ձոր:

Կլորի՛կ, կլորի՛կ, ա՛յ լորիկ,
Օրոր, մորոր, շորորիկ:

Լորի՛կ, լորի՛կ, այս տարի
Արտս ցանել եմ գարի,
Ուր որ գնաս՝ շո՛ւտ արի,
Արտիս միջին ծվարի:

Կլորիկ, կլորիկ, ա՛յ լորիկ,
Օրոր, մորոր, շորորիկ:

# ՀԱՅՐ ՄԵՐ

## *ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ*

Երաժշտ.՝ ***Մ. Եկմալյանի***




Հայր մեր՝ որ յերկինս ես,
Սուրբ եղիցի անուն Քո.
Եկեսցէ արքայութիւն Քո,
Եղիցին կամք Քո,
Որպէս յերկինս եւ յերկրի:
Զհաց մեր հանապազորդ
Տուր մեզ այսօր:
Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք
Թողումք մերոց պարտապանաց:
Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
Այլ փրկեա ի չարէն,
Զի Քո է արքայութիւն եւ
Զօրութիւն եւ փառք
Յաւիտեանս, Ամէն:

# ՕՐՀՆԵՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ




Ամեն հայի սրտից բխած,
Լսիր այս ձայնն, ո՛վ Աստուած.

Երկար կեանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հօր.

Տէ՛ր, անսասան պահիր դու միշտ,
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ:

# ԱՌԱՎՕՏ ԼՈՒՍՈՅ



# ՏԵՐ ՈՂՈՐՄՅԱ




# ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾ



## ԵՐԱԺՇՏԱՌԻԹՄԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

### ՊԱՐԵՐ, ԽԱՂԵՐ

# ՔԱՅԼԵՐԳ

**Tempo di marcia**

Երաժշտ.՝ *Ա. Խաչատրյանի*



# ԷՆԶԵԼԻ

Երաժշտ.՝ *Ա. Սպենդիարյանի*






*«Էնզելի» պարը նախատեսված է աղջիկների կատարման համար: Նախընտրելի է, որ երեխաներն իրենք հորինեն պարի երաժշտության բնույթին համապատասխան շարժումներ:*

# ՑՈՂԻԿՆԵՐ

## РОСИНКИ

Երաժշտ.՝ *Ս. Մայկապարի*




*Կատարել թեթև ցատկեր երաժշտության բնույթին համապատասխան:*

# ԱՐԻԿԻ ՊԱՐԸ

Երաժշտությունը և
շարժումները՝ *Մ. Արովյանի*




Երեխաները կանգնած են շրջանաձև, աղջիկ–տղա հաջորդականությամբ, ձեռքերը բռնած:

***Առաջին մաս***

**1–2 տակտերին** երեխաները ցուցադրում են աջ ոտքի, ապա՝ ձախ ոտքի կրունկը՝ բարձրացնելով և իջեցնելով ձեռքերը:

**3–4 տակտերի** ընթացքում կատարում են 4 քայլ դեպի աջ:

**1–8 տակտերը** կրկնվում են երկու անգամ:

**6–9 տակտերի** ընթացքում աղջիկները ձեռքերը 2–րդ և 3–րդ դիրքերով սահուն շարժումով գնում են դեպի աջ 4 քայլ և կատարում 4 ծափ, տղաները ձեռքերը 2–րդ դիրքով գնում են 4 քայլ դեպի ձախ, կրկնում են նույն շարժումը դեպի ձախ:

**6–14 տակտերը** կրկնվում են երկու անգամ:

***Երկրորդ մաս***

**1–8 տակտերին** կրկնվում են առաջին մասի շարժումները:

**9–14 տակտերի** ընթացքում աղջիկները, ձեռքերը ներքևից վերև բարձրացնելով, կատարում են 4 քայլ դեպի կենտրոն՝ փոքրացնելով շրջանը, վերջում կատարում են 4 ծափ: Այդ ընթացքում տղաները 2–րդ դիրքով կատարում են 4 քայլ դեպի հետ, այնուհետև փոխվում են տեղերը: Վերջում կազմում են զույգեր:

***Երրորդ մաս***

**1–8 տակտերի** ընթացքում զույգերը ցուցադրում են ոտքերը դեպի դուրս՝ կարծես միմյանցից «նեղացած», հետո ցուցադրում են ոտքերը դեպի ներս՝ կարծես «հաշտված», և կատարում են 4 քայլ առաջ, այս ընթացքում աջ ձեռքերը բռնած են, իսկ ձախ ձեռքերը՝ երկրորդ դիրքում:

**1–8 տակտերը** կրկնվում են երկու անգամ:

**9–14 տակտերի** ժամանակ զույգերը կանգնում են իրար դիմաց և կատարում 4 քայլ յուրաքանչյուրն իր աջ կողմի ուղղությամբ՝ ձեռքերը 2–րդ դիրքում կատարում է 4 ծափ: Հետ են գալիս դեպի ձախ՝ նույն շարժումներով:

**9–14 տակտերը** հարկավոր է կրկնել երկու անգամ:

# ՎԱԼՍ

Երաժշտ.՝ *Ֆ. Շուբերտի*



## ՁԵՎԱՎՈՐ ՎԱԼՍ

*Ֆրանց Շուբերտի «Վալս»–ի* երաժշտության ուղեկցությամբ

Երաժշտության չափը՝ 3/4 , տեմպը՝ չափավոր, ելման դրությունը՝ 3–րդ դիրք: Պարը կազմված է չորս մասից և զբաղեցնում է 32 տակտ:

*Առաջին մաս (8 տակտ)*

**1–ին տակտ՝** բալանսե (ճոճվել) պարային գծի ուղղությամբ, տղան՝ ձախ, աղջիկը՝ աջ:
**2–րդ տակտ՝** բալանսե պարային գծի հակառակ ուղղությամբ:
**3–րդ տակտ՝** տղան կատարում է ձախ ոտքով կես պտույտ ձախ, աղջիկը՝ աջ ոտքով կես պտույտ աջ:
**4–րդ տակտ՝** կատարում են երկրորդ կես պտույտը:
**5–8–րդ տակտերին՝** կրկնվում են 1–4–րդ տակտերի շարժումները:

*Երկրորդ մաս (8 տակտ)*

**1–ին տակտ՝** բալանսե դեպի առաջ՝ աջ ոտքով, տղայի և աղջկա ձեռքերը միանում են վերևում:
**2–րդ տակտ՝** բալանսե դեպի հետ, ձեռքերը ձգվում են առաջ:
**3–րդ տակտ՝** կես պտույտ աջ, տղան և աղջիկը տեղերը փոխում են:
**4–րդ տակտ՝** սահող քայլ դեպի հետ՝ ձախ ոտքից:
**5–8–րդ տակտերին՝** կրկնվում են 1–4–րդ տակտերի շարժումները:

*Երրորդ մաս (8տակտ)*

Տղան կատարում է փոփոխական քայլ դեպի առաջ, իսկ աղջիկը՝ վալսի պտույտներ՝ տղայի աջ ձեռքի տակով:

*Չորրորդ մաս (8տակտ)*

Տղան և աղջիկը կատարում են վալսի պտույտ դեպի աջ:

## ԴԵՐԻԿՈ

**Moderato**




*Կրկներգ -*
**Դերիկո՛, հո՜յ նար, հո՜յ նար, հո՜յ նար,Դերիկո՛ ջան,**
**Դերիկոն մեկ էր, ծամերը չեկ էր, խաքունե՛ ջան:**

Մեր տուն, ձեր տուն իրար մոտիկ, Դերիկո՛ ջան,
Մեր տուն, ձեր տուն իրար մոտիկ, խաթունե՛ ջան:
Դու կապել ես կարմիր գոտիկ, Դերիկո՛ ջան,
Դու կապել ես կարմիր գոտիկ, խաթունե՛ ջան:
Մարդ չես թողնի քեզի մոտիկ, Դերիկո՛ ջան,
Մարդ չես թողնի քեզի մոտիկ, խաթունե՛ ջան:
Իջնենք բաղչեն, քաղենք խոտիկ, Դերիկո՛ ջան,
Իջնենք բաղչեն, քաղենք խոտիկ, խաթունե՛ ջան:
Տանենք դնենք մըսրա մոտիկ, Դերիկո՛ ջան,
Տանենք դնենք մըսրա մոտիկ, խաթունե՛ ջան:
Տեսնենք՝ ո՞ւմ յարն է խորոտիկ, Դերիկո՛ ջան,
Տեսնենք՝ ո՞ւմ յարն է խորոտիկ, խաթունե՛ ջան:
Իմ յարն քաց քում է՛լ խորոտիկ, Դերիկո՛ ջան,
Իմ յարն քաց քում է՛լ խորոտիկ, խաթունե՛ ջան:

## ԳՈՎՆԴ

Հայ ժողովրդական շուրջպարերից ամենատարածված դանդաղ և հանդիսավոր պարն է: Այն պարում են բոլորը՝ առանց սեռատարիքային սահմանափակումների (երեխաները պարում են առանձին շարքով կամ շրջանով, հետևելով և նմանակելով մեծերին), տարբեր առիթներով՝ ուխտագնացություններ, հարսանիք, խնջույք: Այդ իսկ պատճառով պարին կարող են մասնակցել մեծ թվով ՝ 100 և ավելի մասնակիցներ (տե՛ս Ս. Լիսիցյան, "Старинные пляски и театрализованные представления армянского народа", т.1, стр. 279), և այն կարող է տևել մի քանի ժամ:

Այդ ընթացքում փոփոխվում են պարին ուղեկցող երգերը, որոնք կատարվում են ժողովրդի մեջ լայն տարածում գտած և սիրված տարբեր խաղիկներով: Կարող են փոփոխվել պարային որոշ դետալներ, օրինակ՝ ձեռքերի բռնվածքը, խաղացող ոտքի դիրքը (ամբողջ ներբանով կամ միայն թաթով), սակայն հիմնական պարաձևը չի փոխվում:

Պարը կատարելու համար կանգնում են ուղիղ շարքով, կիսաշրջանով կամ փակ շրջանով, դեմքով դեպի շրջանի ներսը, միմյանց այնքան մոտ կանգնած, որպեսզի հարևանների ուսերի միջև տարածություն չմնա:

Ծանր գովնդի ժամանակ ձեռքերն իջեցված են՝ սովորական ուղիղ դիրքով, բռնվածքը՝ ափ ափի, այսինքն՝ ձախ ձեռքի ափը հարևանի աջը բռնած, կամ ճկույթ ճկույթի, այսինքն՝ ձախ ձեռքի ճկույթով բռնած հարևանի աջ ձեռքի ճկույթը:

Գովնդ. ճկույթախաղի ժամանակ արմունկները ծալվում են 90 աստիճանով առաջ:

Պարաքայլը հետևյալն է.

«1» հաշվին՝ աջ ոտքով փոքր քայլ դեպի աջ:
«2» հաշվին՝ ձախ ոտքով քայլ–միացում աջին (կից քայլ):
«3» հաշվին՝ դարձյալ աջ ոտքով փոքր քայլ դեպի աջ:
«4» հաշվին՝ ձախ ոտքը ամբողջ ներբանով կամ թաթով դրվում է (ժողովրդի լեզվով՝ խաղում է) աջի կողքին, մի փոքր առաջ:
«5» հաշվին՝ ձախ ոտքը գնում է հետ՝ իր նախկին տեղը:
«6» հաշվին՝ աջ ոտքը կատարում է նույն շարժումը՝ ինչպես ձախը 4 հաշվի ժամանակ, այսինքն՝ դրվում է ձախի կողքին, մի փոքր առաջ:

Բոլոր քայլերը կատարվում են կենտ կամ զույգ թեթևակի ծնկածալով:

# ՏՈՆԱԿԱՆ ՊԱՐ

Երաժշտ. և շարժում՝
*Կ. Եղիազարյանի*




*Երեխաները կանգնած են զույգերով՝ շրջանաձև, աղջիկ–տղա հաջորդականությամբ:*

1–ին մաս

1–2–րդ տակտերին երեխաները ձեռքերը բռնած կատարում են չորս քայլ պարային գծի ուղղությամբ:
3–4–րդ տակտերին ծափ են տալիս մեկ աջ, մեկ ձախ կողմում: Կրկնության ժամանակ նույն շարժումները կրկնվում են դեպի ձախ:
5–6–րդ տակտերին զույգերը շրջվում են դեմքով դեպի իրար և կատարում մեկ ծափ. միացնում են աջ ձեռքերը:
7–8–րդ տակտերին փոփոխական քայլով փոխում են տեղերը, կրկնության ժամանակ 5–12–րդ տակտերին ծափ են տալիս, միացնում ձախ ձեռքերը և փոփոխական քայլով վերադառնում իրենց տեղերը:

2–րդ մաս

1–4–րդ տակտերին աղջիկները պարելով փոքրացնում են շրջանը և մեծացնում, տղաները՝ կանգնած ծափ են տալիս:
5–12–րդ տակտերին աղջիկները, ձեռքերը խաչաձևած, դեմքի առջև դիրքից իջեցնում են և բարձրացնում 3–րդ դիրք, միաժամանակ ոտքերը խաչաձև՝ գնում են աջ, աջ ոտքը կողմ, ձախը հետ, աջը՝ կողմ, ձախը՝ միացնում են: Կատարում են 2 ծափ և պտույտ՝ իրենց շուրջը: Կրկնության ժամանակ 5–12–րդ տակտերին կատարվում են նույն շարժումները՝ դեպի ձախ:

3–րդ մաս

1–4–րդ տկտերին տղաները, ծունկը հատակին ծալած, ծափ են տալիս, աղջիկները փոփոխական քայլքով պտտվում են տղաների շուրջը:
5–12–րդ տկտերին տղաները կանգնում են աղջիկների դիմաց և կատարում 2–րդ մասի շարժումները՝ յուրաքանչյուրն իր աջ կողմը: Կրկնության ժամանակ շարժվում են դեպի ձախ և ավարտում պարը՝ ձեռքերը բարձրացրված վեր դրությամբ:

# ՆԱԶԱ՞Ն ԻՄ, ՆԱԶԵՆԻԿ

«ՇՈՐՈՐ»

**Moderato**




Հ ի մ ն ա տ ո ղ - կ ր կ ն ա կ

Նազա՞ն իմ, Նազենի՛կ, աղբյուրիկ սառ,
Բոյիկըդ՝ չինար, հովանի ծառ:
ա. Գնա՛, գնա՛, հետիդ եմ,
Ալ խնձոր եմ, գոտիդ եմ,
Փունջ մանուշակ՝ ծոցիդ եմ,
Ուր որ էրթաս, մոտիդ եմ:

Նազա՞ն իմ, Նազենի՛կ, աղբյուրիկ սառ,
Բոյիկըդ՝ չինար, հովանի ծառ:
բ. Գնա՛, գնա՛, քեզ հետ գամ,
Փարչիկ լինեմ, քեզ ջուր տամ,
Արևի հետ դու զարթնես,
Քաղցր լեզվով բարև տամ:

Նազա՞ն իմ, Նազենիկ, աղբյուրիկ սառ,
Բոյիկըդ՝ չինար, հովանի ծառ:

# ՇՈՐՈՐ

Շորոր պարն ունի շատ տեսակներ կամ տարբերակներ: Սակայն մեկ հիմնական պայման ընդհանուր է բոլորի համար: Այն է՝ յուրաքանչյուր քայլի ժամանակ իրանը թեքվում է հենվող ոտքի ուղղությամբ, այսինքն՝ շորորում է:

Ներկայացվող շորորը՝ Ջավախքում տարածված տարբերակ է: Պարում են փակ շրջանով, ձեռքերը պահած վեր՝ գլխի մակարդակին հավասար, բռնվածքը՝ ափ ափի, արմունկները՝ ծալված 90 աստիճանով: Աջ և ձախ քայլերի հետ ձեռքերը թեթևակի թեքվում են՝ համապատասխանաբար աջ և ձախ:

Պարաքայլը հետևյալն է.

«1» հաշվին աջ ոտքը կատարում է քայլ 45 աստիճանով դեպի աջ և առաջ, իրանը թեքվում է դեպի աջ, ձախ ոտքը, ծունկը ծալելով, բարձրանում է մոտ:

«2» հաշվին աջ ոտքը կատարում է մեկ ծնկածալ, ձախը պահած է գետնից բարձր, իրանը թեքված է դեպի աջ:

«3» հաշվին կատարվում է նույն շարժումը՝ ինչպես «1» հաշվին, միայն ձախ ոտքով, իրանը թեքվում է դեպի ձախ, աջ ոտքը բարձրանում է:

